ՀՀ ԿԳՄՍՆ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ
Yerevan Mkhitar Sebastatsi EduComplex SNCO of the Ministry of ESCS of RA
ГНКО Ереванский Образовательный комплекс Министерства ОНКС РА
https://www.facebook.com/mxitar.sebastaci?fref=ts info@mskh.am www.mskh.am
(374 10) 74 72 46 (374 091) 43 10 99
0064. Երևան. Ռաֆֆու 57
Raffi 57. Yerevan
Ереван, ул. Раффи 57

24-06-174 *25.06.2024թ.*

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐ
ՏԻԿԻՆ ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ
Պատճենը՝ ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՏՆՕՐԵՆ ԱՐՏԱԿ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

Հարգելի նախարար.

«Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում» հեղինակային կրթական ծրագրի առանձնահատկությունները (հավելված 1), կրթահամալիրի, ծրագրի ցուցանիշները պետական հանրակրթական ծրագրի, հանրակրթական ուսումնական հաստատություն ՊՈԱԿ-ի համար ստեղծված համակարգի կաղապարներին համապատասխանեցնելը ոչ միայն խտրականություն է Հանրակրթության մասին ՀՀ օրենքով որոշված (հոդված 3, կետ 6.3, հոդված 5, կետ 2) պետական կրթական ծրագրերի միջև, այլ նաև այդպիսի համապատասխանեցումը կրթահամալիրը և իրականացվող հեղինակային կրթական ծրագիրը դարձնում են խոցելի, դրա արդյունքում ցուցանիշները կարող են դիտարկվել որպես ոչ ամբողջական, հարուցել կասկածներ: Պարբերաբար բարձրացվող ու չհաղթահարվող խնդիրը (հավելված 2) կրթահամալիրը, մասնաճյուղ դպրոցն անընդհատ կախվածության մեջ է պահում ԿՏԱԿ-ի մասնագետներից, ԿՏԱԿ-ի մասնագետների համար ստեղծում լրացուցիչ կարգավորումներ անելու լրացուցիչ պարտավորություններ, անընդհատ լարվածության մեջ է պահում կրթահամալիրի դպրոցների ղեկավարներին, դասավանդողներին, կրթահամալիր ընդունվող և տեղափոխվող սովորողներին, ծնողներին:

Անհրաժեշտ է մինչև 2024-2025 ուսումնական տարվա ցուցանիշների գրանցումն սկսելը խնդիրը լուծել՝ ապահովելով «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի գրանցումը՝ որպես տարբեր կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների միավորում՝

իր ուսումնական հաստատություններով՝ դպրոց-պարտեզներով, Միջին, ավագ դպրոցներով, քոլեջով, ուսումնական կենտրոններով, իր կենտրոնացված ծառայություններով, կրթական օբյեկտներով, միասնական գործատուով-աշխատակազմով, կրթահամալիրում իրականացվող պետական այլընտրանքային՝ հեղինակային կրթական ծրագրի, կազմակերպման առանձնահատկություններով, հանրապետությունում գործող դաս-դասարանային համակարգին գործող այլընտրանք կազմակերպմամբ՝ ուսումնական խմբերով՝ դասարաններով, սովորողների ընտրությամբ գործունեության, դասընթացների խմբերով, ակումբներով, ուսումնական պարապմունքների տեսակներով, հետազոտական աշխատանքով, ուսուցման կազմակերպման ձևի ընտրությամբ կամ դրանց համակցումով, հեղինակային կրթական ծրագրի օրացույցով, ուսումնական տարով-շրջաններով, ուսումնական ճամբարներով, գնահատման համակարգով, այդ թվում՝ կրեդիտային, այլ:

Խնդրում ենք Ձեր միջամտությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԿՏՀ-ՈՒՄ ՁԳՐԱՆՑՎԱԾ

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ՝ ՍՈՒՍԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐ՝

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԴՊՐՈՑ-ՊԱՐՏԵԶԻ ՏՆՕՐԵՆ՝ Ն. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԴՊՐՈՑ-ՊԱՐՏԵԶԻ ՏՆՕՐԵՆ՝ Գ. ԲԱԼՋՅԱՆ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԴՊՐՈՑ-ՊԱՐՏԵԶԻ ՏՆՕՐԵԵՆ՝ Ք. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԴՊՐՈՑ-ՊԱՐՏԵԶԻ ՏՆՕՐԵՆ՝ Շ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝ Լ. ԲՈՒՇ

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝ Մ. ԱՍԱՏՐՅԱՆ

ՔՈԼԵՋԻ ՏՆՕՐԵՆ՝ Տ. ԲԼԵՅԱՆ

info@mskh.am

Հավելված 1

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր

Ստեղծողի մոբիլ դպրոց: Ստեղծագործ անհատի կրթական պատվեր, անհատի օժտվածության զարգացման հանրակրթական բաց համակարգ: Հեղինակային կրթական ծրագիրը՝ ուսումնական օրացույցով, ուսումնական նախագծերով, անհատական թվային միջոցներով

Հեղինակային կրթական ծրագրի առանձնահատկություններ

1. Հանրակրթական ծրագրերը
   - 2-5 տարեկանների
   - 5 տարեկանների ուսուցման
   - 1-3-րդ դասարաններ
   - 4-5-րդ դասարաններ
   - 6-8-րդ դասարաններ
   - 9-րդ դասարան
   - 10-11-րդ դասարաններ
   - 12-րդ դասարան

Սահմանված կարգով՝ 5 տարեկանների ուսուցման ծրագրի սովորողը 6 տարեկանում շարունակում է ուսումնառության երկրորդ տարվա ծրագրով կամ սկսում է ուսումնառությունը 6 տարեկանների ծրագրով:

2. Հեղինակային կրթական ծրագրերի ուսումնական պլաններ
   - Ուսումնական տարին կազմված է 4 շրջանից: 2-րդ և 4-րդ շրջանները նախագծային ուսուցման, ճամբարային կազմակերպման շրջաններ են: Հուլիս-օգոստոսին կազմակերպվում են ուսումնական պլաններով որոշված արշավախմբային, ռազմամարզական ճամբարներ, հայրենագիտական, փառատոնային, ուսումնական այլ նախագծերով ճամբարներ, ստեղծագործական հավաքներ:
   - Ուսումնական պլանների հիման վրա կազմվում են սովորողների անհատական ուսումնական պլանները:

- Սովորողները ընտրում են նախասիրությունների զարգացման դասընթացներ՝
- 1-3-րդ դասարանում՝ «Երաժշտական գործունեություն», «Կերպարվեստ», «Մարմնամարզություն», «Մաթեմատիկա բանավոր,
- 4-5-րդ դասարանում՝ մաթեմատիկոսի, հայրենագետի, մարզիկի, բուսաբան-կենդանաբանի, պարտիզպանի, այգեգործի, դիզայների, քանդակագործի, թատերական գործունեություն, բնագիտական-տեխնիկական ստեղծագործություն, կինո-ֆոտոգործ, երաժշտություն (սոլֆեջիո, երաժշտական կոմպոզիցիա),
- 6-9-րդ դասարանում՝ առարկայական նախագծեր՝ քերականության, մաթեմատիկական, բնագիտական (ֆիզիկոսի, քիմիկոսի, կենսաբանի, աստղագետի), ինժեներական-տեխնիկական, կինո-ֆոտոյի, օտար լեզվի (գերմաներեն, վրացերեն, պարսկերեն, թուրքերեն, ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն, հունարեն, իսպաներեն, իտալերեն)-թարգմանչության, կենդանիների և բույսերի խնամքի, վայրի բույսերի հավաքման-մշակման, կերպարվեստի-դիզայնի-մոդելավորման-քանդակի, ոսկերչի, պատմաբան-հնագետ-ազգագրագետի, երգչախմբային, մարզական, արհեստավորի (այդ թվում՝ նաև բրուտի, պարտիզպանի, այգեգործի, խոհարարության, կարուձևի, գորգագործության-ասեղնագործության) գործունեություն,
- 10-12-րդ դասարանում՝ անգլերեն, գերմաներեն, թուրքերեն, իսպաներեն, ռուսերեն, վրացերեն, ֆրանսերեն, պարսկերեն, հայոց լեզվի քերականություն, աշխարհագրություն, կենսաբանություն, ընդհանուր պատմություն, հայոց պատմություն, քիմիա, ֆիզիկա, գծանկար, գունանկար, կոմպոզիցիա, գծագրություն-նախագծում, քանդակ, դերասանի վարպետություն-բեմական խոսք, համակարգչային գրաֆիկական ծրագրեր, մուլտիպլիկացիա, մոնտաժ, լուսանկարչություն, օպերատորական գործ, ռեժիսուրա և բեմական գործ, սոլֆեջիո, կերպարվեստ և դիզայն, խեցեգործություն, ոսկերչություն, կար և մոդելավորում, գործվածք-գորգ-կարպետագործություն, հասարակական սնունդ, համակարգիչների շահագործում, հրատարակչական գործ, պարտեզապուրակային գործ, այգեգործություն, ատաղձագործություն, երկրագործություն, գինեգործություն:
- 6-12-րդ դասարաններում ֆիզկուլտուրան սովորողների ընտրությամբ մարզական ակումբ է՝ նետաձգության, սուսերամարտի, մարմնամարզության,

ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի, ձեռքի գնդակի, սեղանի թենիսի, հեծանվավարության, հնգամարտի, եռամարտի:

- 6-9-րդ դասարանում ընտրում են երկրորդ օտար լեզուն՝ անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն, գերմաներեն, վրացերեն, թուրքերեն, պարսկերեն:
- 10-12-րդ դասարանում ընտրում են օտար լեզուն (լեզուներ)՝ անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն, գերմաներեն, ռուսերեն, վրացերեն, թուրքերեն, պարսկերեն:
- 10-12-րդ դասարանում ընտրում են դասընթացը վարող ուսուցչին:
- 6-12-րդ դասարանում նախասիրությունների զարգացման ակումբի ընտրություն առաջարկվող ցանկից, նոր ակումբ ձևավորելու հնարավորություն:

Ուսումնական պարապմունքների խմբերը (դասարանները) ձևավորվում են ըստ սովորողների անհատական պլանների: Սովորողների ընտրությամբ գործունեության, դասընթացների խմբերը կարող են նաև տարատարիք լինել:

3. Ուսումնական պլանով որոշված են նաև՝
   - համադպրոցական (ընդհանուր) պարապմունք,
   - ինքնասպասարկման, շրջապատի, նյութական միջավայրի բարելավման, ուսումնական-հասարակական (քաղաքացիական կրթության) նախագծերը:
4. Ուսուցումը կազմակերպվում է ուսումնական պարապմունքների տարբեր տեսակներով, ուսումնական նախագծերով: Սահմանված կարգով իրականացվող ուսումնական ճամփորդությունները դասընթացների, ակումբային գործունեության, ընտրությամբ գործունեության, ուսումնական նախագծի բաղկացուցիչն են:
5. Սովորողների կարողություններին և պահանջմունքներին համապատասխան՝ կրթական ծրագիրն իրականացվում է առկա, հեռավար, տնային ձևերով, դրանց համակցումով:
6. Կիրառվում են գնահատման տարբեր ձևեր
   - 1-5-րդ դասարաններում՝ առանց գնահատանիշի, սահմանված կարգով լրացվող բնութագրով:
   - 5-12-րդ դասարանում՝ սովորողի ուսումնական գործունեության հրապարակված արդյունքներով (ուսումնական բլոգ, ցուցադրություն, համերգ, ֆլեշմոբերի, ծեսերի-տոների, ստուգատեսների, ճամբարների, ճամփորդությունների մասնակցություն):

- 10-12-րդ դասարաններում՝ գնահատման կրեդիտային համակարգով:
- Դասարանից դասարան սովորողները փոխադրվում են հեղինակային կրթական ծրագրով սահմանված կարգով՝ առանց կրկնելու դասարանը:
- Կրթական ծրագրերի ավարտին՝ ուսումնական գործունեության արդյունքների ներկայացում-ստուգատես:

7. Ուսումնական պլանի կազմակերպում

- Դասացուցակ՝ անհատական ուսումնական պլանի հիման վրա:
- Դասարանների, ուսումնական խմբերի փոփոխություն ուսումնական օրվա մեջ:
- Տարատարիք սովորողների նախագծեր:
- Տարբեր դպրոցների սովորողներից կազմված նախագծային խումբ:
- Ուսումնական օրվա մեջ կրթահամալիրի տարբեր մասնաշենքերում պարապմունքներ:
- Արտագնա պարապմունքներ:
- Ուսուցման կազմակերպում ուսումնական օրացույցով, ուսուցման թվային միջոցներով, ուսումնական բլոգներով:

Հավելված 2

Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում կրթահամալիրի, հեղինակային կրթական ծրագրի գրանցումը[1]

ՀՀ կառավարության կողմից նպատակային ստեղծված կրթահամալիր փորձարարական-հետազոտական միավորումը՝ իրականացվող բոլոր կրթական ծրագրերով, իր մասնաճյուղերով, հաստիքացուցակներով, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված այլընտրանքային՝ հեղինակային կրթական ծրագրերը՝ իրենց բովանդակությամբ, կազմակերպմամբ, գրանցվող ցուցանիշներով, ուսումնական խմբերով, ուսումնական աշխատանքի գնահատմամբ, հնարավոր չէ ամբողջական, ճշգրիտ ներկայացնել Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) ստեղծած կրթության կառավարման տեղեկատվական համակարգում (ԿՏԿՀ):

1. Դպրոցների կառավարման համակարգում՝ կրթահամալիրի կազմում գործող վեց հանրակրթական հաստատությունները, մասնագիտական կրթության կառավարման համակարգում՝ կրթահամալիրի քոլեջը իրականում առանձին կազմակերպություններ չեն: Պետական ոչ առևտրային կազմակերպությունը տարբեր կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների միավորում կրթահամալիրն է, որը ցանցում արտացոլված չէ:
2. Կրթահամալիրի ուսումնական հաստատությունները որոշված են կրթահամալիրի կանոնադրությամբ: Կրթահամալիրում հեղինակային կրթական ծրագրով ստեղծվել և գործում է չորս դպրոց-պարտեզ. այսպիսի հաստատությունը ԴԿ համակարգում չկա: Իրենց կառուցվածքով տարբերվում են նաև մյուս ուսումնական հաստատությունները:

Կրթահամալիրի ուսումնական հաստատությունները

- Արևելյան, Արևմտյան, Հյուսիսային, Հարավային դպրոց-պարտեզներ՝ 2-5 տարեկանների խմբեր, 1-5-րդ դասարաններ, երկարացված օրվա խմբեր, լրացուցիչ կրթության խմբեր (խմբակներ):
- Միջին դպրոց՝ 6-8-րդ դասարաններ, երկարացված օրվա խմբեր, լրացուցիչ կրթության խմբեր, նախասիրությունների զարգացման ակումբներ (խմբակներ):
- Ավագ դպրոց՝ 9-րդ դասարաններ, 10-12-րդ դասարաններ, նախասիրությունների զարգացման ակումբներ, լրացուցիչ կրթության խմբեր (խմբակներ):
- Քոլեջ՝ նախնական (արհեստագործական) մասնագիտական, միջին մասնագիտական ծրագրերի խմբեր, 2-5 տարեկանների խմբեր, 4-9-րդ դասարանցիների տեխնոլոգիայի դասընթացների, 4-12-րդ դասարանցիների ընտրությամբ արհեստների ուսուցում, լրացուցիչ կրթության խմբեր (խմբակներ):

ՀՀ կառավարության 27.02.2003թ. N 361-Ն որոշման համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 06.02.2003թ. 55-Ա հրամանով, Երևանի քաղաքապետի 08.01.2004թ. 4-Ա որոշումով, ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայքի ավագանու որոշումներով, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման վկայականներով Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրին ամրացված են կրթական օբյեկտներ և տարածքներ: Կրթահամալիրի կրթական օբյեկտներից հինգը նախկին մանկապարտեզ է, միայն մայր դպրոցն է տիպային դպրոցական շենք, բայց դա էլ արդեն առանձնացված դպրոց չէ, որ գնահատվի որպես այդպիսին: Կրթահամալիրն իր մասնաշենքերի հիմնանորոգման համար պետական միջոցներ չի ստացել տասնամյակներ

info@mskh.am

շարունակ. քառասուն տարի առաջ կառուցված մասնաշենքերի այսօրվա վիճակն ստեղծվել է կրթական ծառայություններից ստացված, դպրոցների սովորողների, նախակրթարանի սաների ծնողների վճարումներից մասհանած միջոցներով՝ հարմարեցնելով դրանք նպատակային օգտագործմանը, հիմնանորոգելով տանիքներ, սանհանգույցներ, բարեկարգելով ուսումնական տարածքները, ստեղծելով նոր ուսումնական տարածքներ, նոր ինտերյեր, մարզահրապարակներ, լողավազան, բակեր, կրթական պարտեզ, մասնաշենքերի նկուղները, տանիքները վերածելով ուսումնական տարածքների: Աշխատանքներն արվում են ըստ անհրաժեշտության, յուրաքանչյուր տարվա համար որոշվող առաջնահերթությամբ:

Կրթական օբյեկտների բարեկարգման-բարելավման աշխատանքները, կոմունալ ծառայությունների հաշվառումն ու ծախսերի համար վճարումը կազմակերպվում են կենտրոնացված ձևով: Կրթահամալիրի ուսումնական հաստատության հասցեն այն է, որտեղ նրա գրասենյակն է: Հեղինակային կրթական ծրագրերի ուսումնական պլաններով որոշված դասընթացները, այդ թվում՝ նաև սովորողների ընտրությամբ, խմբակները (ակումբները) կազմակերպվում են կրթահամալիրի ուսումնական կենտրոններում, լաբորատորիաներում, արվեստանոցներում, արհեստանոցներում, որոնք կրթահամալիրի տարբեր մասնաշենքերում են, և սպասարկում են բոլորին: Այսպես հանրակրթական հաստատություններից յուրաքանչյուրի սովորողները կրթահամալիրի՝ ոչ միայն կոնկրետ հաստատությանը տրամադրված մասնաշենքում են մասնակցում ուսումնական պարապմունքների, իրականացնում ուսումնական գործունեություն, այլ նաև բոլոր մյուսներում: Դպրոցներից յուրաքանչյուրը ԿՏԱԿ-ի «Դպրոցների կառավարման համակարգում» իր հասցեից բացի գրանցել է կրթահամալիրի մյուս կրթական օբյեկտները՝ որպես մասնաշենքեր, այդ թվում՝ Հյուսիսային և Արևմտյան դպրոց-պարտեզները, Մայր դպրոցը, Կենտրոնը, Քոլեջը, Ուսումնական ագարակը, Արատեսի դպրոց բնության գրկում ուսումնական կենտրոնը: Ներքին պայմանավորվածությամբ «Հանրակրթական դպրոցներում էներգետիկ վիճակագրության հավաքագրման և կառավարման էլեկտրոնային համակարգում» առանձին օբյեկտների տվյալները, սպառած կոմունալ ծառայությունները գրանցում ենք դպրոցներից մեկի էջում, որպեսզի ծախսերը ճշգրիտ արտացոլվեն: Եթե պետք է, կարող ենք նաև տվյալները գրանցել բոլոր մասնաճյուղերի էջերում, ամբողջ ծախսը բաժանել բոլորի վրա: Հանրակրթական ծրագրի սովորողների թվով ֆինանսավորման ժամանակ սա խնդիր չի եղել, հիմա այն հնարավոր է լուծել «Հանրակրթական դպրոցներում էներգետիկ վիճակագրության հավաքագրման և կառավարման էլեկտրոնային համակարգում» կրթահամալիրի կրթական օբյեկտները գրանցելով մի էջում, կենտրոնացված:

3. Կրթահամալիրի աշխատողների գործատուն կրթահամալիրն է, նրանց հետ աշխատանքային պայմանագիր կնքում է կրթահամալիրի տնօրենը: Մասնաճյուղ ուսումնական հաստատությունում աշխատում են կրթահամալիրի աշխատողները: Ուսումնական տարվա համար մանկավարժական աշխատողը կարող է ուսումնական ծանրաբեռնվածություն ունենալ կրթահամալիրի մեկ կամ մի քանի մասնաճյուղում: Աշխատողների թիվը ԴԿՏ-ից «ինքնաշխատ եղանակով գեներացնելու» դեպքում կրթահամալիրի աշխատողների թիվը իրականից տարբեր կլինի: Ուսումնական տարվա 2-րդ և 4-րդ ճամբարային շրջաններում, հուլիս-օգոստոսին մանկավարժական աշխատողի ուսումնական ծարաբեռնվածությունը, անհատական պլանը այլ գրանցում ունեն:

Կրթահամալիրի մանկավարժական աշխատողի ընտրությունը, նրա մասնագիտական զարգացումը կատարվում է՝ նկատի ունենալով, որ նա կրթահամալիրում իրականացվող հեղինակային կրթական ծրագրի ստեղծողն է՝ մշակողը, կազմակերպողը, տարածողը,

- հեղինակային կրթական ծրագրի ուսումնական օրացույցով որոշված նախագծերի, ուսումնական ճամբարների, ստեղծագործական հավաքների հեղինակ-կազմակերպիչ,
- հեղինակային կրթական ծրագրերի ուսումնական պլաններով որոշված՝ սովորողների ընտրությամբ գործունեություն, ակումբ, դասընթաց ծրագրող-վարողներ, որոնց համար մանկավարժական բուհերը մասնագետներ չեն պատրաստում.
- 6-րդ դասարանից սկսած՝ սովորողների ընտրությամբ մարզական ակումբների ղեկավարներ, այդ թվում՝ նետաձգության, սուսերամարտի, ձիավարության, հրաձգության, հեծանվավարության մարզիչներ՝ մարզական ֆեդերացիաների երաշխավորությամբ.
- կրթահամալիրում իրականացվող միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով դասախոս, ուսվարպետ.
- նախագծերի ղեկավար:

4. ԴԿՏՀ-ում հնարավոր չէ ճշգրիտ ներկայացնել հեղինակային հանրակրթական ծրագրերի բոլոր ցուցանիշները: Համակարգում գրանցման պահանջները տարիներ շարունակ խնդիրներ են առաջացնում, որոնք պարբերաբար փորձում ենք ինչ-որ կերպ լուծել ԿՏԱԿ-ի գործընկերների հետ փոխհամաձայնությամբ ու համագործակցությամբ, ստիպված ենք լինում հարմարեցնել, դրանից ցուցանիշները ճշգրիտ չեն արտացոլում

իրականությունը, տարընթերցում են առաջացնում: Կրթահամալիրը նախարարություն, ԿՏԱԿ ներկայացրել է հեղինակային ծրագրի առանձնահատկությունների: